

ավանդական ու նոր հնարների միահյուսմամբ: Չպետք է մոռանալ, որ ուսուցիչների հնարավորություններն ու կարողությունները տարբեր են, տարբեր են նաև նրանց հակվածությունը մեթոդական հնարների օգտագործման հարցերում: Պարզապես, ուսուցման փոխներգործուն մեթոդները օգտակար են սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգացական ոլորտների զարգացման առումով, իսկ զգացմունքայնությունը ուսուցման մեծ խթան է: Աշակերտների համար հնարավորություն է ընձեռվում սովորել սեփական սխալների հիման վրա, զբաղվել ինքնակրթությամբ, հաղորդակցվել մյուսների հետ և այլն:

Գոյություն չունեն ուսուցման մեթոդների օգտագործման կոնկրետ հրահանգներ, քանի որ յուրաքանչյուր դաս անկրկնելի ստեղծագործական գործընթաց է՝ կախված թեմայի, սովորողների, ուսուցչի, առկա հնարավորությունների առանձնահատկություններից և այլն:

#### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ ДИДАКТИКИ

*Գ. Դ. ՕԳԱՆՅԱՆ*

В статье рассматриваются некоторые проблемы дидактики, связанные с традиционными и современными методами обучения.

#### SOME PROBLEMS OF MODERN DIDACTICS

*Կ. Կ. ՕԿԱՆՅԱՆ*

This article explores some problems of didactics related to traditional and modern methods of teaching.

### ԱՌՏԻՍՏԻԿ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՉԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐՈՒՄ

**Լ. Ն. ՔՈՒՐԵՉՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու*

**Լ. Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*ԳՊՀ դասախոս*

Դեռևս անցած դարի 80-ական թվականներին նյարդաբանները սկսեցին խոսել «աուտիզմ» համախտանիշի մասին, որը նյարդա-հոգեկան խեղաթյուրում է առաջացնում անձի հոգեկանում, ախտահարում է ուղեղի համապատասխան հատվածները, ինչի արդյունքում խնդիրներ են առաջանում շրջակա միջավայրի ընկալման, սոցիալիզացիայի, վերբալ հաղորդակցման և մի շարք այլ ոլորտներում:

րում: Մասնագետները ահազանգում են, որ վերջին տարիներին գրանցվել է վերը նշված համախտանիշի դրսևորման զգալի աճ: Միջին հաշվով 150 երեխաներից մեկը տառապում է աուտիզմով և պատահական չէ, որ վերջին ժամանակներս պետական կրթական համակարգի կողմից մեծ ուշադրություն է դարձվում ներառական կրթական ծրագրին, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (այդ թվում նաև աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաների) և հոգեկան նորմալ զարգացում ունեցող երեխաների համար համատեղ ուսուցանում է իրականացվում, երբ որոշակի հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաները պետք է մուտք գործեն «առողջ» խումբ, հետագայում նաև հասարակություն՝ ենթարկվելով վերջինումս գործող օրենքներին և նորմերին, որտեղ իր ուրույն տեղն ու դերն ունի հոգեբանը, նրա կողմից իրականացվող մասնագիտական միջամտությունը:

Փորձելով ընդհանուր բնութագրական տալ «աուտիզմ» համախտանիշին՝ պետք է նշել, որ այս տերմինը հոգեբանության մեջ ներդրել է Բլեյլերը, ըստ որի աուտիզմն իր հետ բերում է արտաքին իրականության հետ ակտիվ կոնտակտի բացակայություն, ծայրաստիճան ինքնամիտություն: Մանկական հոգեբանության մեջ ներդրվել է «վաղ մանկական հասակի աուտիզմ» տերմինը /Բենդեր, Բետելխեյմ, Բրոնո, Մնուխին, Սիմենո, Սուխարյով, Օրնից և այլն/: Վաղ մանկական հասակի աուտիզմին բնորոշ է երեխայի և մեծահասակի միջև կոնտակտի բացակայությունը, շրջակա միջավայրում հաստատունության պահպանման ձգտումը, խոսքի կիրառման ցանկության բացակայությունը և կամ խոսքի կոմունիկացիոն ֆունկցիայի բացակայությունը: Մանկական աուտիզմի էթիոլոգիայի բացահայտմանը նվիրված են մի շարք հետազոտություններ (Լ. Կաններ, Կ. Լեբիդինսկի, Վ. Բաշինա և ուրիշներ), որոնց ընթացքում վիճաբանություններ են առաջացել հոգեբանական և կենսաբանական ուղղվածությունների կողմնակիցների միջև( 3):

Մանկական աուտիզմի պսիխոգեն տեսության զարգացման գործում կարևորվում են Լ. Կանների տեսակետները: Նա այդ երեխաներին բնորոշում էր որպես հուզականորեն սառը, չափազանց ինտելեկտուալ մարդիկ: Հոգեվերլուծական ուղղվածության հետազոտողները երեխայի մոտ նկատվող դժվարությունները կապում են ծնողների բացասական հատկանիշների հետ՝ պնդելով, որ այդ երեխաները կենսաբանորեն առողջ են: Պաթոգեն էին գնահատվում ծնողներին բնորոշ առանձնահատկությունները, երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, ընտանիքում ընդունված դաստիարակության ոճը: Սակայն հետագայում աուտիզմի պսիխոգեն լինելու վերաբերյալ վարկածը չհաստատվեց, իսկ հետազոտության ժամանակակից մեթոդները փորձում են բացահայտել, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների մոտ առկա են ԿՆՀ-ի աշխատանքի անբավարարության նշաններ: Եվ վիճաբանությունների ընթացքում առաջացավ մի միջանկյալ տեսակետ (Կ. Գիլբերգ, Տ. Պիտերս ), համաձայն որի պաթոգեն է հանդիսանում խոցելի երեխայի և անբարենպաստ միջավայրի համընկնումը, դրանց միառժամանակյա գոյությունը:

Մանկական աուտիզմի հետևանքով զարգացման խանգարումներ նկատվում են հոգեկանի բոլոր ոլորտներում: Այս երևույթը բժշկական միջազգային տերմինալոգիայում անվանում են հոգեկանի պերվազիվ խանգարում (աուտիզմ):

Արտաքինից վաղ մանկական աուտիզմով երեխան կամակոր, չար երեխայի տպավորություն է թողնում, և փողոցում, տրանսպորտում մարդկանց բացասական վերաբերմունքը, երեխային ճիշտ չհասկանալը ավելի է բարդացնում իրավիճակը և՛ երեխայի, և՛ ծնողի համար: Ընդհանուր առմամբ «աուտիզմ» համախտանիշի տակ հասկացվում է բացահայտ չշփվելու ցանկություն, շփումից հեռանալու ձգտում: Չշփվելը կարող է տարբեր կերպ դրսևորվել և տարբեր պատճառներ ունենալ: Սակայն վաղ մանկական աուտիզմի դեպքում դժվար է առանձնացնել առաջնային պատճառներն ու հետևանքները և հասկանալ՝ երեխան չի ուզո՞ւմ, թե չի կարող:

Մեր կողմից իրականացվող աշխատանքի նպատակն է, հաշվի առնելով վերը նշված բնութագրական տվյալները, բացահայտել աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաներին մանկապարտեզի խումբ ինտեգրացնելու առանձնահատկությունները, ինձպես նաև ձևավորել և զարգացնել համագործակցության որակները մեր իսկ կողմից մշակված անհատական հոգեբանական զարգացման ծրագրի միջոցով:

Գիտափորձարարական աշխատանքն իրականացվել է Աջափնյակ համայնքի թիվ 198 մսուր/մանկապարտեզին կից գործող մանկան զարգացման կենտրոնում, որտեղ աշխատանքներին մասնակցել են նախադպրոցական տարիքի 4 երեխա /1 աղջիկ, 3 տղա/, որոնք ունեին աուտիստիկ ախտանիշներ, ինչպես նաև այն նորմալ հոգեկան զարգացում ունեցող երեխաները, որոնց խումբ էլ հենց պետք է ներառվեին փորձարկվող երեխաները: Ձևավորող և զարգացնող բնույթի հոգեբանական աշխատանքներն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխայի համար մեր կողմից մշակվել է անհատական հոգեբանական զարգացման ծրագիր, որն համընդհանուր էր, սակայն ելնելով յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկություններից՝ այն յուրաքանչյուրի հետ յուրովի է իրականացվել: Փորձելով առավել մանրամասնել մեր կողմից իրականացված գործնական աշխատանքները՝ պետք է նշել, որ վերջինս բաղկացած է մի քանի փուլերից:

Աշխատանքների առաջին փուլը ախտորոշիչ բնույթ է կրել: Վերջինիս իրականացման համար կիրառվել է հոգեբանական գրույցը ծնողների հետ, երեխայի վարքի դիտում, կենսագրական տվյալներ հավաքագրման մեթոդ և այլն: Ախտորոշման արդյունքում բացահայտվել էր, որ աուտիստիկ ախտանիշներ ունեցող տվյալ երեխաները ունեին շփման դժվարություններ, իմացական ոլորտը չէր համապատասխանում տարիքին, առկա էին վարքի, խոսքի զարգացման յուրահատուկ խանգարումներ, հաղորդակցման շրջանակները սահմանափակ էին, կանոններին և սահմանափակումներին բացասաբար էին արձագանքում, նկատվում էր ֆիզիկական ագրեսիա և ինքնասագրեսիա, ինքնասպասարկման հմտություններն առկա էին միայն մեծահասակի լրիվ կամ մասնակի օգնության պարագայում, բացակայում էր ուշադրության կենտրոնացվածությունը, բնորոշ էր գերակտիվ վարք և այլն:

Աշխատանքների երկրորդ փուլի իրականացման ընթացքում շեշտը դրվել է շփման հմտությունների ձևավորման վրա՝ կիրառելով հեքիաթաթերապիա, խաղաթերապիա և արտթերապիայի որոշ տարրեր: Երեխաների հետ աշխատանքում, հատկապես, երբ լուրջ խնդիրներ են նկատվում շփման և հաղորդակցման

ուղորտներում, չափազանց կարևոր է ընտրել հաղորդակցման նրանց «լեզուն» և մեթոդները, այսինքն՝ խոսել նրանց լեզվով: Ասենք, որ հեքիաթները երեխաների հետ շփման արդյունավետ միջոցներից մեկն են հանդիսանում, դրանք համարվում են երեխայի հոգեկան զարգացման համար այնպիսի անհրաժեշտ փուլ, ինչպիսին, օրինակ, խաղն է: Հեքիաթի միջոցով է սկսվում երեխայի ծանոթությունը աշխարհի և մարդկանց մեջ առկա փոխհարաբերությունների հետ: Այս փուլում իր կարևորագույն տեղն ունի նաև խաղաթերապիան, որտեղ խաղը հույզերի և զգացմունքների արտահայտման, շրջապատող իրականության ճանաչման և մոդելավորման միջոց է: Այն երեխային օգնում է ձեռք բերել որոշակի հմտություններ այս կամ այն գործունեության մեջ, այդ թվում նաև հաղորդակցման, վարքի հասարակական նորմերը յուրացնելու ժամանակ: Իսկ նկարչությունն ու ծեփակերտումը երեխաներին հնարավորություն են տալիս լինել ինքնատիպ, ազատ արտահայտել իրենց զգացմունքներն ու ապրումները, վերակառուցել հարաբերությունները: Նկարչությունը, ինչպես և խաղը, ոչ միայն երեխաների գիտակցության մեջ շրջապատող իրականության արտացոլումն է, այլև դրա մոդելավորումը և վերջինիս նկատմամբ վերաբերմունքի արտահայտում: Այսպիսով, երեխայի խաղի, նկարների, ծեփակերտումների միջոցով կարելի է ոչ միայն ախտորոշել նրա հետաքրքրությունները, ապրումները, այլև դրանց միջոցով հենց իրականացնել բուն հոգեշտկողական աշխատանքները, որոնք ուղղված են հաղթահարելու մի շարք աուտիստիկ ախտանշաններ, մասնավորապես՝

- հաստատել տեսողական կոնտակտ,
- հաղթահարել ուշադրության պակասը,
- զարգացնել շփման հմտություններ,
- ձևավորել համագործակցության որակներ փոքր խմբերում:

Մինչ երեխայի և խմբի անդամների հետ ինտեգրատիվ աշխատանք սկսելը՝ մասնագետի և երեխայի հետ կոնտակտի հաստատում էր տեղի ունենում: Երեխա-մասնագետ փոխվստահության ձևավորումից, այնուհետև ամրապնդումից հետո սկսվում էր տեսողական կոնտակտի ձևավորումն ու ամրապնդումը, վերջինս էլ շփման և հաղորդակցման ամենապարզագույն, միևնույն ժամանակ հիմնական տարրերից է: Տեսողական կոնտակտի ձևավորումն իրականացվում էր հետաքրքրաշարժ դիմակների միջոցով, հայելու առջև, որը ակամայից գրավում էր երեխայի ուշադրությունն ու ապահովում սկզբնական շրջանում թեկուզ և տեսողական կոնտակտի մեխանիկական առկայությունը: Այնուհետև՝ երեխայի և մասնագետի միջև փոխվստահության և տեսողական կոնտակտ հաստատելուց հետո, իրականացվում էր երեխայի և խմբի անդամների փոխհամագործակցային որակների ձևավորման աշխատանք՝ նախապես ընտրելով ըստ տարիքային ստորաբաժանման երեխային համապատասխան խումբը: Աշխատանքի ընթացքում կիրառվեցին մի շարք խաղեր, որոնցից մի քանիսը կներկայացվի ստորև:

«Շարժումներով խաղ»։ նպատակն է երեխայի մոտ հաստատել տեսողական կոնտակտ, զարգացնել ուշադրության կենտրոնացվածությունը, ձևավորել համագործակցության որակներ, ինչպես նաև զարգացնել շարժումների կոորդինացիան: Խաղի ընթացքում նախ մասնագետը ծանոթացնում է երեխային խաղի մասնակիցների հետ, բոլոր երեխաները ասում են իրենց անունները, իսկ մասնագետը այդ ընթացքում առաջարկում է երեխային որպեսզի նա նայի նրանց աշ-

քերի մեջ և ասի իր անունը: Մասնագետի օգնությամբ նրանց հաջողվում է իրականացնել առաջադրանքը: Այնուհետև երեխաները վերցնում են ժապավենը և ձեռքի օձանման շարժումներով հեռացնում այն փորձարկվող երեխայից՝ առաջարկելով նրան կանգնել ժապավենի վրա: Սկզբում դա նրանց չէր հաջողվում, բայց խաղը մի քանի անգամ կրկնելուց հետո նրանք կարողանում էին ուշադիր նայել և կանգնել ժապավենի վրա: Խաղի ընթացքում, երբ երեխաները դադարում էին ժապավենը պտտել, փորձարկվող երեխաները դիմում էին նրանց, որ պեսզի նրանք շարունակեն, այսինքն, կարելի է ասել, որ աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաները գնում էին կոնտակտի և խաղի ընթացքում ինչ-որ տեղ նաև նախաձեռնություն ցուցաբերում:

Չաջորդ խաղը, որը կիրառվել է՝ «Ձայներով խաղն է»: Այս խաղի նպատակն է երեխայի մոտ զարգացնել հատկապես լսողական ուշադրությունը տարբեր երաժշտական գործիքների՝ շվիի, դիոլի և դափի միջոցով: Նախ նշենք, որ աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաները խիստ զգայուն են շրջապատող ձայների նկատմամբ: Խաղի ընթացքում երեխաները տարբեր երաժշտական գործիքներից պետք է ձայներ արձակեին, իսկ փորձարկվող երեխաները պետք է մատնանշեին այն երաժշտական գործիքը, որից հենց ձայնն արձակվել էր: Սկզբում բավականին բարդ էր առաջադրանքն իրականացնել, այնուհետև աստիճանաբար կարողանում էին կողմնորոշվել և գտնել «ճիշտ պատասխանը»:

Տարբեր խաղերի ընթացքում մասնագետի կողմից դիտարկվում էին երեխայի ցուցաբերած վարքը, խմբում դրսևորած վարքի և գործունեության առանձնահատկությունները: Աշխատանքն առավել մանրամասն պատկերացնելու նպատակով ստորև ներկայացնենք աղյուսակ, որտեղ մանրամասն տրված են կատարված աշխատանքը, կիրառված խաղերը, ինչպես նաև ստացված արդյունքները:

Փորձարկվողի ախտորոշումը	Փորձի նպատակը	Քայլերը	Ստացված արդյունքները
<ul style="list-style-type: none"> <li>• ուշադրության դեֆիցիտ</li> <li>• տեսողական կոնտակտի բացակայություն</li> <li>• շփման հմտությունների թերզարգացումը</li> <li>• իմացական ոլորտի թերզարգացում</li> <li>• համագործակցության որակների բացակայություն</li> <li>• ինքնասպասարկման հմտությունների թերզարգացում</li> <li>• ընդհանուր մոտորիկայի թերզարգացում</li> <li>• գերշարժունություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• հաստատել տեսողական կոնտակտ</li> <li>• ձևավորել ուշադրության կենտրոնացվածություն</li> <li>• զարգացնել շփման հմտություններ</li> <li>• ձևավորել համագործակցության որակներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• խաղ «Շարժումներով»</li> <li>• խաղ «Ձայներով»</li> <li>• խաղ «Դիր տեղերում»</li> <li>• խաղ «Դիմակներ»</li> </ul>	<p>Աշխատանքը իրականացնելուց հետո, որի մեջ ներառված էին բազմաթիվ խաղեր, մեզ հաջողվեց աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաների մոտ ձևավորել և զարգացնել</p> <ul style="list-style-type: none"> <li>• ուշադրության կենտրոնացվածությունը</li> <li>• հաստատել տեսողական կոնտակտ</li> <li>• ձևավորել համագործակցության որակներ</li> <li>• զարգացնել շփման հմտություններ:</li> </ul> <p>Այս որակները զարգացնելուց հետո փորձարկվող երեխաները ինտեգրացվեցին նոր խումբ, խմբում ցուցաբերեցին համագործակցության տարբեր խմբի որոշ անդամների հետ և այլն:</p>

Գիտափորձարարական աշխատանքում կարևոր է նաև այն հանգամանքը, որ նախքան երեխային մանկապարտեզի խումբ ներառելը, խմբի նորմալ հոգեկան զարգացում ունեցող երեխաների հետ իրականացվում է նախապատրաստական աշխատանք, նրանք տեղեկացվում են շփման դժվարություններ ունեցող երեխաների մասին, ինչը թույլ էր տալիս համապատասխան դրական վերաբերմունք և դիրքորոշում ձևավորել աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաների նկատմամբ, ինչպես նաև ապրումակցման և օգնելու ցանկություն ի հայտ բերել նրանց մոտ, որը սույն աշխատանքի կարևորագույն նպատակներից մեկն էր, քանզի այն հումանիզմի ձևավորում է ապահովում:

Այսպիսով, հիմնվելով վերոհիշյալի վրա, կարելի է ասել, որ «աուտիզմ համախտանիշն» իր հետ լուրջ խաթարումներ է բերում անձի հոգեկան աշխարհում և հատկապես շփման ու հաղորդակցման ոլորտում, և այդ է պատճառը, որ աուտիստիկ ախտանիշներ ունեցող երեխաները մասնագիտական լուրջ միջամտության կարիք ունեն: Մշտական, կայուն, զարգացնող, հոգեբանական աշխատանքն իր դրական ազդեցությունն է ունենում երեխայի հոգեկան զարգացման վրա, երբ դրական տեղաշարժեր են նկատվում հոգեկանի կառուցվածքի գրեթե բոլոր բաղադրամասերում:

#### **ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Баенская Е. Р., Либлинг М. М.** Психологическая помощь при нарушениях раннего эмоционального развития. М., 2001г.
2. **Башина В. М.** Аутизм в детстве. М., 1999г.
3. **Детский аутизм.** Хрестоматия. Сост. Шипицына А. М. – М., 1999г.
4. **Лебединский В. В., Никольская О. С., Баенская Е. Р., Либлинг М. М.** Эмоциональные нарушения в детском возрасте и их коррекция. - М., 1990г.

#### **ДИНАМИКА ИНТЕГРАЦИИ ДЕТЕЙ С АУТИСТИЧЕСКОЙ СИМПТОМАТИКОЙ В ГРУППАХ ДОШКОЛЬНОГО УЧРЕЖДЕНИЯ**

**Л. Н. КУРКЧЯН  
Л. С. ТОВМАСЯН**

В статье представлена разработанная нами индивидуально-психологическая программа по развитию социально-психологического контакта, общения, взаимодействий детей с аутистической симптоматикой, которая обеспечивает динамику интеграции их в группу дошкольного учреждения.

#### **THE INTEGRATION DYNAMICS OF CHILDREN HAVING AUTISTIC SYMPTOMS IN THE PRESCHOOL INSTITUTIONS**

**L. N. KURKCHYAN  
L. S. TOVMASYAN**

A psychological programme of individual development of the children having autistic symptoms is presented in this article. It provides the dynamics of their integration in the groups of preschool institutions.